

Լեռնահովիտ

Մակերես՝ 20,68կմ²

Բնակչություն՝ 1573

Տնային տնտեսությունների թիվը՝ 344: Գյուղ Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 10 կմ հյուսիս-արևելք, մարզկենտրոնից գտնվում է 62 կմ հեռավորության վրա:

Գյուղը հիմնադրվել է 1822-23 թվականներին: Գյուղի բնակիչները գաղթել են Մուշից և Էրզրումից:

Գյուղն անվանել են Ղարաքիլիսա, հետագայում 1978թվականից՝ Լեռնահովիտ: Գյուղում և

շրջակայքում պահպանվել են <<Չարգարաքենդ>> գյուղատեղին, Եկեղեցի(12-13 դ.դ.),

գերեզմանոցներ(12-19 դ.դ.):

Բարձրությունը ծովի մակարդակից 1650 մետր: Կլիման բարեխառն է, ձմեռը երկարատև ու ցրտաշունչ, ամառը՝ զով: Գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 1716,7 հա, որից՝ 707,9 հա վարելահող, 176,4 հա խոտհարք, 783,9 հա արոտ:

Բնակիչները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, ցորենի, գարու, կարտոֆիլի, կաղամբի և այլ բանջարա-բոստանային կուլտուրաների արտադրությամբ:

Համայնքն ունի դպրոց, բուժկետ, փոստի բաժանմունք:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են խմելու ջրագծերի ներքին ցանցի վերանորոգման ավարտումը, գյուղատնտեսական մթերքների իրացումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: